

— Այս գիշեր հրդեհ պատահեցաւ մեր Սուրբ Նրեչտակապետ վանուց պատկոյց վանքապատկան միջնորոնցի մը մէջ, որ վարձն տրուած էր, ու շէնքը ամբողջովին այրեցաւ: Լըշէ Ներքու և ժողովուրդին բուռն շանքերուն շնորհիւ կարելի եղաւ արգելել կրակին յառայացումը գէպի վանք:

● Կիր. 26 Ապրիլ. — Գիշերային եւ տառաւորեան ժամերգութիւնը կատարուեցաւ Ս. Յարութեան մեր վերնամասրան մէջ. Տ. Մեհարոյ Սըրբազան կանդիտի պատարագեց Ս. Գերեզմանին վրայ, սպա քարոզեց ճՏԷր է Խտեղաշն յայտ. միգ. (Ծննդ. ԻՐ. 16) քնարանի վրայ. ներկայացուց Սողոմոնեան տաճարն իբրև ստուեր քրքրատեղեկան Եկեղեցիին. մատենանց այս ընթերցան գերազանցութիւնը իբրև իսկական քնակարան Ատուածոյ, իբրև տեղի ուր ստուաւ:

ձայն գիտութիւնը կ'աւսուցուի, ուր երկնային արդարութեան պատգամները կը քարոզուին, և ուր մեղքէն արտաւորուած կողմն իր բուժումը կ'ընդունի Ազնազնիւով Եկեղեցույ տիեզերականութեան դազափարին, իբրև այդ մտածումին յիշատակարան մատենանց Ս. Յարութեան տաճարը, ուր բոլոր քրիստոնեայ ազգեր կը միանան ամէն օր անմահութեան խորտին առջև, ու պանծացուց Հայաստանեայց Ս. Եկեղեցին, ու պանծացուց Հայաստանի ամենէն շեմը շատագոյր, իր հըրայրական յայնախոհ վերաբերմունքովը կանդեպ բոլոր քրիստոնայ Եկեղեցեաց:

● Գշ. 28 Ապրիլ. — Եգիպտոսի վեհապետ Յուսւս Ա. Թագաւորի մատուան իւրը՝ Ս. Պատրիարքը ցաւակցական կեանքի տուաւ վեհմ. Այլ Մահէն Փաշայէ, և այնքանութիւն՝ տեղոյս Եգիպտական Հեղապատարան:

Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱՐՈՆԵԱՆ

Միաբնութիւնս վիշտն ունեցաւ կորսեցնելու իր բազմամեայ անդամներէն ձերուսազարդ այս հոգևորականը. որ Ապրիլ ամսու 2ի Յշ. օրը վախճանեցաւ Ս. Քաղաքի Փրսնական Հիւանդանոցին մէջ, ուր փոխադրուած էր երկու օրեր առաջ:

Ծնած էր 1862ին, Նապին Գարանիարի Արտաթի գիւղը. և, իննամեայ հասակին, իր այրիացեալ հորը՝ Դուկասի հետ Կ. Պոլիս փոխադրուելով. ժամանակ օր յայրաբար աշակերտած Օրթոգոքիցի, Պայաթի և Լայաթիոյ ազգային նախադիմարաններուն, 1885ին Երուսաղէմ եկած, և, թէև արդէն հասակաւոր երիտասարդ, ընդունուած է Ս. Աթոռոյս ժառանգաւորաց վարժարանը, որմէ և շրջանաւարտ եղած է 1888ին: Անվճարէս մտած է Պատրիարքարանի դիւան, ուր տարի մը իբր օգնական-դիւանագետ ծառայելէ վերջ, կարգուած է դիւանապետ. պաշտօն՝ զոր շարունակած էր 1889-1914: Աննախ չէ եղած այդ առթիւ իր ծառայութիւնը՝ ոչ միայն թվականական և արձանագրական, այլ աննախնդ վուերթիթիւրու զտարտուման և վիճակագրական աշխատութեանց մէջ: Կիրթ էր գեղագրութեան և գծադիտութեան, մասամբ նաև նկարչութեան մէջ, և այս տեսակէտով ևս օգտակար եղած է, ժառանգաւորաց վարժարանի մէջ իբրև ուսուցիչ: Վարդապետ ձեռնադրուած է 1892ին՝ հոգեբոյս Տ. Յարութիւն վեհապետին, որուն գաւառական կիր եղած է նաև տարիներ, 1905էն ի վեր անդամ էր Գանձարանի Յանձնաժողովոյ. իսկ քանիցս նաև եղած է անդամ Տնօրէն ժողովոյ: Բնաւորութեամբ լուռ, նկարագրով նախանձանկիչ, քուսակ սիրող էր Ս. Աթոռոյ: Իբր կից տարիներ է ի վեր բոլորովին զաղքած էր գործելէ, տառապաղին վիճակի մը կետեանքով զատուպարտուած ըլլալով դրժմէ անշարժութեան:

Վախճանման վաղորդայնին, ի ժամ Ս. Պատարագի, Ս. Պատրիարք Հայր օծումը կատարեց և խոսեցաւ զամբանականը՝ օժամանակ զարժի իմպ կեանք ընարանին վրայ. բացառեց թէ քրիստոնէական մտածումին մէջ մակը վերադարձն է անձին հոն՝ ուսուցիչ եկած էր. ինչպէս մարմնը կը դառնայ ի հող՝ ուսուցիչ անուած էր, նոյնպէս հոգին կը վերադառնայ անուանութեան կեանքին՝ որ հոգիին նախադիւանը. անոր նախահայրենիքն է. երկրաւոր կեանքը պանդխտութեան մըն է ուրմն, և առաքելի մարդը նա է, որուն սրտին մէջ ընդ միշտ վառ կը մնայ իր հոգեկան կայքերնքին կարօտը, բուն հոգեւոր և յախտեանական կեանքին սերը: Անուք, որոնք այսպէս կ'անցընեն իրենց աստեղ կեանքը. երանական զգացումով մըն է որ կ'անցնին միւս կեանքին, անելի քան ինչպէս իր սիրելի կայրինքը զարձոյ նօղե՛կը: Ապա ներկայացուց կեանքը կանգաւորութեան և կանգիտութեան թաղիքով անոր հոգեւոր:

Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ Լուսարարպետ Տ. Մեհարոյ Սրբազանի գլխաւորութեամբ և մատակցութեամբ բովանդակ Միաբնութեան, աշակերտաց և ժողովրդեան: Լանդապետին մարմիքը ամփոփուեցաւ Ս. Փրկչի վանուց պատկոյց հասարակաց գերեզմանատունը, միաբաններու յատկացեալ հողաբաժնին մէջ:

Լանդիտս իր հոգեւոր: